Ղարս. — La ville de Kars.

հոյակապ եկեղեցի, որոյ գմբէթ անկեալ է, և ան-տի կոչուին գեղջն, և այլք. յոլովագոյն ևս յայսոսիսի չինուածեանց գտանին 'ի ՀՕՐԻԿԵԼ վանքի, որ է ՀԻ-ՐԱԿՆ հին, յարևելից Վանանդայ և 'ի մէջ Ախու-ռեան գետոյ, որով զատուցանի 'ի բաժնէն Ռուսաց. անուանի արգասաբերութեամբն յաւուրց Թոռանցն Հայկայ, 'ի շատակերն Շարայէ առեալ զիւր անուն. զոր պահէ ցարդ գլխաւոր տեղի վանքիս Պաշ-Շօ-ռէնէլ աւան հուսկ յԱխուռեան, որ 'ի հնումն կոչէր ՀԻՐԱԿԱՒԱՆ և ԵՐԱԶԳԱՒՈՐՍ, ուր նախ նստան Բագրա-տունի Թագաւորք, և կիսականգուն կայ 'ի նմա տա-ճարն մեծագործ զոր կանգնեաց Սմբատ Ա յամին 897։ Այլ վեհագոյն ամենայն ձեռագործ յիշատա-կարանաց վանքիս և յոգունց գաւառաց է

39. Անի յետին գահ և պատուար Այրարատեան աշխարհի, գեղեցկագոյնն ծանուցեալ և սրբազնագոյն քաղաքաց Նորա, սիրելին սիրալին և տիրալին շնա-վայր Հայոց, և Թերևս կենդանայուշն և սրտառուչ ամենայն աւերակաց. որոց 'ի հնգից դարուց հետէ համբաւեալ ընդ ամենայն Հայս, և իբր 'ի քառասուն ամաց յԵւրոպէ իսկ շարժեալ ոչ փոքր զարմանս, 'ի բազմաց հետաքնին արանց մերազնէից և օտարաց քըն-նեալ և տեղագրեցաւ, Թէպէտ և ոչ ըստ իւրուն ար-ժանոյ բաւական ընդնեալ, և բացեալ դերբկայն 'ի դիւտ հետոց յատակին և նշխարեալ մեացուածոց. բայց զի յամաց հետէ և մերայոցս ընձեռեցաւ նկա-րագիր տենչալոյն նոցա 'ի վաղուց (1), ոչ զամ-նայն մանրամասն կամիմք ստատնոր տեղագրել և ար-ձանագրել, և ոչ դարձեալ հարևանցի անցանել, մա-նաւանդ զոչ ցարդ հրատարակեալ չափս տեղւոյն և զանազանս նորին։ Արդ կառուցեալ կայ Անի 20 մղնաւ հեռի յարևելից Ղարսայ, յաջմէ Ախուրեան գետոյ, 'ի քարուտ բարձրաւանդակի, վերացելոյ 4380 ոտս յերեսաց ծովու, յեռանկիւնաձև իմն թերակղզ-ոջ զոր գործեն՝ յարևելից կուսէ քարաժայռք խո-րացեալք ձորաձև, զորով փարի գեան ի ջեալ 'ի հիւ-սիսոյ վանքին, և 'ի հարաւոյ խորաձորն ընդ որ խա-ղայ Ախուրեանն 'ի խորուոջ 2–300 ոտից, արմատնին գործելով յարևմուտս կոյս, և յայսմ կողմանէ պատի (յարևմտից) լայնագոյն ևս ցամաք Զոր Ծաղկոցաձոր որ և Ծաղկոցաձոր, և ընդ հիւսիս կոյս խոտորեալ հար-թանայ խառնի ընդ դաշտագեանին, և անդ գլխա-ւորի անձուկ հիւսիսակողմն եռանկեան քաղաքին. և զի չիք յայնմ կողմանէ ձոր կամ գետ, կրկին հզօր

(1) Պատմութիւն Անւոյ, տպագրեալ 'ի Ս. Ղազար. — Բազմավէպ Օրագիր, հատ. Դ. 324. Ե. 5. — Հայաստան Լրագիր, թիւ 44. յորում ստո-ւրագրին և ջրջավայրք Անւոյ, 'ի թիւսն 127–179, և այլն։